№ 77 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 9 **1892** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 9 № 77

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կառավարել անընդունակութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւններ խօլէրայի մասին. Խօլէրայով վարակումն. «Մարդասիրական ընկերութեան» մարդասէրները. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքիայից. Գերմանիա. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿԱՏԱՐԵԱԼ ԱՆԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Մենք արդէն հաղորդել էինք, որ Երևանի քաղաքային վարչութիւնը սպասելով մօտեցող խօլէրային, պարաքով է վերցրել 20,000 րուբլի մասնաւոր անձից, որպէս դի կազմակերպի սանիտարական գործը քաղաքում: Այժմ „Тифл. Листокъ“ լրագրին գրում են, որ Երևանում կային չորս հոգի երիտասարդ նորաւարտ բժիշկներ, որոնք առաջարկելով իրանց ծառայութիւնը սանիտարական գործը կազմակերպելու, խնդրեցին քաղաքային վարչութիւնից ամիսը 100-ական րուբլի մինչև խօլէրայի յայտնվելը, իսկ խօլէրայի երևալու րօպէից 200 րուբլի ամսական: Սակայն Երևանի դուման չափազանց համարելով այդ տեսակ պահանջ երիտասարդ բժիշկների կողմից, մերժեց նրանց առաջարկութիւնը և բժիշկները թողեցին Երևանն ու հեռացան....

Ուրեմն այսպիսի փառաւոր, կամ աւելի լաւ է ասել այսքան անմիտ քայլով է սկզբում Երևանի ինքնավարութիւնը իր գործունէութիւնը, աչքի առջև ունենալով մօտեցող սարսափելի վտանգը.... Մի քանի հարիւր րուբլի է խնայում,—մեծ և հերոսական քայլ.... Հարցնող լինի, եթէ 20,000 պարտքով էք վերցնում քաղաքի սանիտարական գործը հաստատ հիմունքների վրա դնելու համար, էլ ո՞ւր էք խնայում սանիտարական բժիշկներին տալու ռոճիկը:

Թող քաղաքագլուխ Գեղամեանց և Երևանեան քաղաքային վարչութիւնն ու դուման չը մոռանան այն աննախանձելի դերը որ նորերումս, ազատի Երևանը րօպէից մինչև այսօր, վիճակվեց խաղալ Բագուի ինքնավարական օրգաններին, իրանց անընդունակութեան և անձեռնհասութեան պատճառով ըմբռնելու հասարակական շահերը և նրանց բաւականութիւն տալու: Թող չը մոռանան՝ Գեղամեանը և նրա քաղաքային վարչութիւնն ու դուման այն թշուառ վիճակը, որի մէջ գտնվում է այժմ Բագուն իր ինքնավարութեան հետ միասին, արհամարհված լինելով ամբողջ երկրի հասարակաց կարծիքից՝ իրանց անպատրաստականութեան համար մաքառելու էպիդեմիայի դէմ, որպէս վայել է քաղաքակիրթ մարդկային հասարակութեան....

Թող չը մոռանայ Երևանը որ առաջնորդված լինելով այնպիսի անընդունակ հասարակական գործիչներով ինչպէս է Գեղամեանն իր դումայով և քաղաքային վարչութեամբ՝ խօլէրայի երևալուն պէս այդ քաղաքին նոյն վիճակն է սպասում, որի մէջ ընկաւ Թշուառ Բագուն:

Մինչև այժմ ոչինչ պատրաստութիւն չեն տեսնում Երևանում մօտեցող ախտի տարածման առաջը միջոցներ ձեռք առնելու համար: Եւ առաջին քայլերը որ անում են,—դրանք էլ վերին աստիճանի սխալ և վտանգաւոր քայլեր են լինում: Քաղաքային ինքնավարութիւնը դրա համար չէ միայն որ քաղաքացիներից հարկեր ժողովի և տօն օրերին փողոցներում լուսաւորութիւն անէ, այլ որպէս քաղաքային ինքնավար մարմին, դուման իր քաղաքագլխով և ուպրավայով ամեն տեսակ աղետի ժամանակ մանաւանդ պէտք է ցոյց տայ իր ընդունակութիւնը հոգալու քաղաքացիների բարօրութեան մասին:

Իսկ եթէ այդ բանում ձեզ անընդունակ էք զգում, պ. Գեղամեան ձեր դումայով և ուպրավայով՝ աւելի լաւ է այս րօպէիս խմբովին հրաժարվեցէք ձեր պաշտօններից, քան թէ հանենք ինքներդ և հասցնենք քաղաքը այն թշուառ և միանգամային խայտառակ դրութեան, որին հասցրին Բագու քաղաքը նրա քաղաքագլուխ Դեսպօտ-Զինօվիչ, իր ուպրավայով և իր դումայի ձայնաւորներով....

Եթէ Երևան քաղաքը, և Երևանի քաղաքացիք դեռ ևս ունեն որ և է ինքնասիրութեան զգացմունք, եթէ Երևանում գոյութիւն ունի հասարակաց կարծիքի նշոյլն անգամ,—այդ հասարակաց կարծիքը պէտք է պահանջէ որ Երևանի այժմեան քաղաքագլուխը և ամեն գործին նրա անձեռնհաս վարչութիւնն ու դուման՝ անմիջապէս հրաժարվեն իրանց պաշտօններից և իրանց տեղը զիջանեն աւելի ձեռնհաս մարդկանց:

Աստուած տայ որ Երևանում խօլէրա չը լինի. բայց եթէ նա կը յայտնվի,—մենք հաստատացած ենք որ շնորհով Երևանի այժմեան անընդունակ ինքնավարութեան այդ ախտը այնպիսի կերպարանք կընդունի այդ քաղաքում, որ Բագուի սարսափներն անգամ խաղալիք կերևան Երևանին սպասող պատուհասի առջև:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԷՐԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Յուլիսի 6-ին առաւօտեան քաղաքային Միքայէլեան հիւանդանոցում խօլէրայով հիւանդներ կային՝ 20 տղամարդիկ և 2 կանայք. օրվայ ընթացքում աւելացան 5 տղամարդիկ՝ Բայանդուրեանց՝ խարազովի տնից, Մէյդանի մօտ, 6-դ քաղաքամասում, Շավչիչվիլի՝ Աստուրօվի իջևանից Կախետինսկայա փողոցի վրա, 7-դ քաղաքամասում, Օբօրոտով՝ Բէլակինի տնից, Դէսիմօնօվսկայա փողոցի վրա, 8-դ քաղաքամասում, Խանօվ՝ Միրզօևվի տնից, Կօլիչայա-քալկա ասված տեղում (կասկածելի դէպք) և Գալդօվ՝ Միրզօևվի այգուց, 7-դ քաղաքամասում: Բացի դրանից 7-դ քաղաքամասից բերեցին մէկ կին, որը մնաւ կառքում. օրվայ ընթացքում հիւանդանոցից դուրս եկան 4 տղամարդիկ՝ Զուչկին, Մայէր, Տօմաչ, և Արչվաձէ. օրվայ ընթացքում մեռան 1 տղամարդ և 1 կին: Յուլիսի 6-ին երեկոյեան կային 20 տղամարդիկ և 2 կանայք: Բոլոր հիւանդներից 9 հոգի առողջանալու վրա են խօլէրային բաժնում և 2 հոգի կասկածելի հիւանդների բաժնում:—Յուլիսի 6-ի գիշերը հիւանդանոց մտաւ 1 տղամարդ—Օգօրօդնիկով (կասկածելի դէպք) Յուրինօվի դեղատնից, 3-դ քաղաքամասում, և 1 կին —Կուրչէվսկայա, № 16 տնից, Սէմէօնօվսկայա փողոցի վրա, 9-դ քաղաքամասում. մեռան 2 տղամարդիկ՝ Շալիկով և Տէրխօվ. ուրիշ բաժանմունքներն է փոխադրված Խանօվ աղդանունով 1 տղամարդ. յուլիսի 7-ին առաւօտեան կային 18 տղամարդիկ և 3 կանայք: Հիւանդների թիւում կան 10 հոգի առողջացող հիւանդներ խօլէրային բաժնում և 2 հոգի կասկածելի հիւանդների բաժնում:

Յուլիսի 5-ին խօլէրայով հիւանդացաւ Սերգօ Պետրօսով Նօղինով, 20 տարեկան, որը բնակվում է Խարխուխ թաղում, 6-դ քաղաքամասում. յուլիսի 5-ին հիւանդանոցը տանելու ժամանակ ճանապարհին մեռաւ Սեմէօն Օհանէզով 6-դ քաղաքամասից, (սեփական տուն Խարխուխում). յուլիսի 6-ին խօլէրայով հիւանդացաւ Արտէմ Ասատուրօվ, որը բժշկվում է իր բնակարանում. յուլիսի 6-ին մեռաւ Թիֆլիսում խօլէրայի նշաններով Բալթայիսի նահանգի Սենակեան գաւառի Մօզդոկ գիւղի բնակիչ Ֆիլիպ Բաւուէվ Կաջայիա. յուլիսի 6-ին խօլէրայով մեռան իրանց բնակարաններում պարսկահպատակ Ֆէյզուլա-Ախմադխան-օղլի, Զէյնալօվի տանը, Տամօժէննայա փողոցի վրա, 6-դ քաղաքամասում, և 8-դ քաղաքամասում, Գօնչարնայա փողոցի վրա, սեփական տան մէջ ապրող՝ Վարվարա Միխայլօվնա Կախէլաձէ, 25 տարեկան:

Յուլիսի 6-ին Թիֆլիսի բանտից Մետեխի հիւանդանոցն են մտել՝ բանտարկեալ Նաղիրաձէ և բանտարկեալ կին Միրելօվա. նոյն թւին մեռաւ բանտարկեալ Կօվալեվ:

Սղնախի գաւառի Կակաբէթ գիւղում յուլիսի 3-ին և 5-ին խօլէրայով հիւանդանալու երկու դէպք է եղել:

—

Ելիսաւետպօլի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 5-ին Շուշի քաղաքում հիւանդացան 4 հոգի, առողջացան 5, մեռան 2, հիւանդներ կան 25. գաւառում հիւանդացան 5, մեռան 5, կային 4 հիւանդներ: Զանգեզուրի գաւառում հիւանդացան 29, առողջացան 39, մեռան 7, մնացին 10 հիւանդներ. Ղազախի գաւառում հիւանդացաւ 1, մեռաւ 1, կայ 1 հիւանդ: Ելիսաւետպօլ քաղաքում հիւանդացան 33, մեռան 12, կային 37, բացի դրանից կայ 1 կալանաւոր, հիւանդացան 2, մեռան 2. գաւառում կային 5 հոգի հիւանդներ: Նուխի քաղաքում հիւանդացան 6, մեռան 5, կային 3. գաւառում հիւանդացաւ 1, առողջացան 5, մեռաւ 1, կային 3 հոգի: Ջևանշիրեան գաւառում հիւանդացան 15, մեռան 5, մնացին 25 հիւանդներ: Ընդամենը գաւառում կային 113 հիւանդներ:

—

Բագուի նահանգապետը հաղորդում է, որ սոյն յուլիսի 5-ին խօլէրային հիւանդանոցներն են մտել 29, դրանցից եկաւորներ 10. մեռան 12, եկաւորներ 7, առողջացան 20. մնացին հիւանդանոցում 118, եկաւորներ 47. Հիւանդանոցներից դուրս մեռան 20, եկաւորներ 11. Նահանգում հիւանդացան 79, մեռան 48. առողջացան 18. Սալիանի պահեստի զօրքի հիւանդանոցը մտան 2, մեռաւ 1, մնացին 28.

—

Բաթումի զինուորական նահանգապետը հաղորդում է այս յուլիսի 6-ից, որ Բաթումում խօլէրայի մի քանի դէպքեր են եղել: Բաթումում նոյն յուլիսի 6-ին խօլէրայով հիւանդացան Բաթումի քնակիչ Օհանէսով, որը Թիֆլիսում չորս օր էր մնացել:

—

Դաղստանի զինուորական նահանգապետը հաղորդում է, որ սոյն յուլիսի 5-ին Տէմիր-Խան-Շուրայում հիւանդացաւ 1, Պետրօվսկում 4, մեռաւ 1. Շրջաններում հիւանդացան 132, մեռան 77. առողջացան 12. մնացին հիւանդներ Թէմիր-Խան-Շուրայում 1, Պետրօվսկում 6. շրջաններում՝ Կիւրինեան 41, Կայտագո-Տաբասարանեան 38, Սամուրեան 22, Դարգինեան 24, Կաղիկումախեան և Թէմիր-Խան-Շուրայի 7.

—

Թիֆլիսում խօլէրայով հիւանդներ կային յուլիսի 6-ին 22 մարդիկ. յուլիսի 6-ին հիւանդացան 14, առողջացան 8, մեռան 5: Յունիսի 7-ին հիւանդներ մնացել էին 23, որոնցից 21 հոգի Միքայէլեան հիւանդանոցում, իսկ 2 հոգի հիւանդանոցից դուրս: Բացի դրանից Թիֆլիսի նահանգի գաւառներում խօլէրայից հիւանդացան՝ 1) Թիոնէթի գաւառում, Սարադուբի մօտ, յուլիսի 5-ին հիւանդացաւ և մեռաւ 1 հոգի. 2) Սղնախի գաւառում 3-ին և 5-ին յուլիսի խօլէրայից հիւանդացան 2, որոնցից առաջինը մեռաւ յուլիսի 4-ին:

—

Թիֆլիսում յուլիսի 7-ին խօլէրայով հիւանդներ կային 23, հիւանդացան 10, առողջացան 2, մեռան 3 և յուլիսի 8-ին հիւանդներ մնացին 28, որոնցից 26 Միքայէլեան հիւանդանոցում, և 2 հոգի իրանց բնակարաններում:

ԽՕԼԷՐԱՅՈՎ ՎԱՐԱԿՈՒՄՆ

—

«Մշակի» նախընթաց համարում մենք տեսանք, որ խօլէրային թոյնը (կամ միկրօբը) գտնվում է միմիայն խօլէրայով հիւանդի արտաթորութիւնների մէջ:

Երկրորդ կէսն այն է, որ այս խօլէրային թոյնը միայն ստամոքսի և աղիքների մէջ կարող է զարգանալ:

Այսպէս, երբ մի մարդ հիւանդանում է խօլէրայով, մենք ամենայն իրաւունքով կարող ենք պնդել, թէ նա կուլ է տուել այդ թոյնը, որը նրա ստամոքսումն աճելով և զարգանալով՝ առաջացրել է հիւանդութիւնը:

Բայց ինչ ճանապարհով մենք կարող ենք կուլ տալ խօլէրայի թոյնը, կամ «ստորակէտ միկրօբները», որոնք, կրկնում ենք, միայն հիւանդի արտաթորութիւնների մէջ են գտնվում:

Ահա մի մարդ գնում է խօլէրայով վարակված մի երկրից մի ուրիշ քաղաք, որտեղ խօլէրայի դէպքեր դեռ չեն եղել: Այդ մարդը մի օրից, երկու օրից յետոյ հիւանդանում է խօլէրայով և մեռնում: Մի քանի օր անցած, նոյն տան մէջ հիւանդանում է մեռածի ամենամօտիկ բարեկամը, որը խնամել էր նրան, յետոյ հիւանդանում են այդ տան միւս բնակիչները, յետոյ դրացիները, յետոյ հարևան փողոցում դէպքեր են պատահում և հիւանդութիւնը տարածվում է ամբողջ քաղաքում:

Անտարակոյս այսպիսի դէպքերում անմիջական վարակումը մեզ միւսից ակներև է.—առաջին հիւանդը այս շղթայի առաջին օղակն է:

Բայց կարող են պատահել ուրիշ կարգի դէպքեր ևս: Վարակված երկրից մի մարդ գնաց մի ուրիշ քաղաք, հիւանդացաւ այնտեղ ու մեռաւ: Մի քանի օրից յետոյ, այդ քաղաքի մի ուրիշ ծայրում մի անձն, որը ոչ մի յարաբերութիւն չէ ունեցել առաջինի հետ, հիւանդանում է խօլէրայով ու նոյնպէս մեռնում: Խիստ քննութիւնը ցոյց կը տայ անշուշտ, որ այս նոր մեռնողը կամ գբնել է առաջինի հագուստը, կամ լուացել է նրա սպիտակեղէնը, կամ վերջապէս նրա խմած ջուրը վերցրած է եղել գետից, իսկ այս գետի մէջ թափված են եղել հիւանդի արտաթորութիւնները:

Մեր դրած ընդհանուր օրէնքը թէ վարակման պատճառը միշտ հիւանդի արտաթորութիւններն են, կը բացատրի մեզ հիւանդութեան բոլոր դէպքերը:

Բայց քանի որ մենք տեսանք («Մշակ» № 75), որ խօլէրայով հիւանդի, կամ, ինչպէս կոչում են, խօլէրիկի արտաթորութիւնների մէջն է միայն ստորակէտ բացիլը, այսինքն այս հիւանդութեան պատճառը, ուրեմն տեսնենք թէ ինչպէս ենք կուլ տալիս մենք այդ բացիլը:

—

Հիւանդին խնամողները և մտերիմները կարող են միայն անմիջապէս վարակվել հիւանդի արտաթորութիւնները թափելով, կամ արտաթորութիւններով թրջված իրերին ձեռք տալով: Այս դէպքերում ձեռքին կպչում է արտաթորութիւններից մի չնչին մասնիկ, որի մէջ, այնու ամենայնիւ, կենդանի մնում են միլիօնաւոր խօլէրային բացիլներ: Բաւական է ուրեմն, որ այդ անձն իր վարակված ձեռքը բերանը տանի, կամ անլուայ հաց ուտի, և չատ հաւանական է, որ նա կը վարակվի, որովհետև թուքի, կամ կերակրի հետ նա կուլ կը տայ իր ձեռքին կպած բացիլները:

Վարակումն կարող է պատահել հետևեալ կերպով ևս: Հիւանդի արտաթորութիւնները, առանց ախտահանելու, թափվում են, օրինակ, արտաքնոց: Մի քանի կաթիլներ նրանցից ընկնում են գետնին, արտաքնոցի նստարանի վրա և այլն, իսկ երբ մի ուրիշը մտնում է նոյնտեղ, կարող է քսվել այդ վարակված կէտին և, առաջին օրինակում բացատրված կերպով, նոյնպէս վարակվել:

Հիւանդի փոխնորդը (սպիտակեղէնը), նրա անկողինը, հագուստը խօլէրայի միկրօբների բներն են:

Եւ, իրօք, այն ինչ ասուած է Հայկական Սահմանադրութեան մասին, թէ նա «Հռոմէական իրաւունքի հիմունքներով է կազմուած», մի ուրիշ բան է, որ մենք «Հռոմէական իրաւունք» ենք ասում, որ մենք ունենք Հռոմէական իրաւունքի դասագրքեր, որոնց մէջ հաւաքուած են Հռոմէական իրաւունքի կանոնները, որոնք ուսանելի են մեր իրաւաբանական դպրոցներում, որոնց հիման վրայ կազմուած են մեր դատարանների որոշումները, որոնց հիման վրայ կազմուած են մեր դատաւորների զեկոյցները, որոնց հիման վրայ կազմուած են մեր դատաւորների եզրակացութիւնները, որոնց հիման վրայ կազմուած են մեր դատաւորների վճիռները, որոնց հիման վրայ կազմուած են մեր դատաւորների որոշում

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

պում Ռուսաստանից եկող ճանապարհորդների վրա հսկելու համար։

—Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ, Մէկկայում խօլէրայով հիւանդանալու ոչ մի դէպք չէ եղել, իսկ Կ. Պօլսի և նրա չրջակաների սանիտարական դրութիւնը գոհացուցիչ է։

—Մէկ չէրնօգօրցու կողմից անձնասպանութեան փորձ անելու պատճառով իչխան Նիկօլայ մի հրաման արձակեց, որով բոլոր անձնասպանները, որպէս և անձնասպանութեան փորձ անողները պէտք է քաղաքացիական պատից զրկված համարվեն, որովհետև «ամօթ է, որպէս ասված է հրամանի մէջ, զրկել իրան կեանքից, որը իւրաքանչիւր չէրնօգօրցի պէտք է գոհ կուի դաշտի վրա, իր հայրենիքի պաշտպանութեան համար»։ Հրամանը մի և նոյն ժամանակ զգուշացնում է, որ իւրաքանչիւր անձնասպանի դիակը կը կախվի կախաղանի վրա 24 ժամով, իսկ անձնասպանութեան փորձ անող անձը կաքսորվի Չէրնօգօրիայի սահմաններից։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յուլիսի։ Տարիֆային յանձնաժողովը կարգադրել է քչացնել չաքարի տեղափոխութեան տարիֆը հարաւային երկաթուղիների կայարաններից դէպի Անդրկովկաս։

ԼՕՆԴՕՆ, 6 յուլիսի։ Սիմնէյից հեռագրում են, երէկվան թուից, որ այստեղ եկած չոգենաւը լոր բերեց, թէ Տիմօր կղզու վրա պատռող լուրերին նայելով, ժայթքող հրաբուղիներից մինը բոլորովին ոչնչացրեց Սանգիր կղզին, որը գտնվում է Ցէլեբեսի և Մինդանաոի մէջտեղը. աղետի ժամանակ ապանվեցան կղզու բոլոր 12,000 բնակիչները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յուլիսի։ Պաշտօնական. միջոցներ են ձեռք առնվում, որ թոյլ չը տրվի խօլէրայի տարածվելը Կազանի նահանգում։—Վերջին օրերս խօլէրայից մեռան՝ Ատրախանում և գաւառներում 503, Բագուում և գաւառներում 227, Պօկրօվսկում 151, Սարատօվում 105, Գանձակի նահանգում 90, Դաղստանի չրջանում 71, Սամարայում և գաւառներում 55, Յարիցկինում 54, Թերեքի չրջանում 24, և Կամիչինի գաւառում 11 հոգի։—Երէկ երեկոյեան Սօկհօլմից վերադարձաւ ֆինանսների մինիստրը և կապրի Շուվալով գիւղի ամարանոցում, Պետերբուրգի մօտ։—Հունձի վերաբերեալ վերջին տեղեկութիւնները համարվում են գոհացուցիչ. անբարեյաջող լուրեր ըստացված են միմիայն հիւսիսային նահանգներից։

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ, 7 յուլիսի։ Մէչչանին կիտաւել, որը լուրեր էր տարածում՝ թէ չինծու բան է, որ իբրև թէ Ռուսաստանում խօլէրա կայ, մոցրած է խօլէրայի պատճառով չինված հիւանդանոցի սանիտարական սպասաւորների չարքը, որպէս զի համոզվի որ սխալվում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յուլիսի։ Բարձրագոյն հրաման է հրատարակված միջին-ասիական ապրանքները Ռուսաստան ներմուծելու պայմանների մասին։ Ներմուծվող բամբակը, բուրդը, ուրիշ առարկաները և ապրանքները պէտք է նախապէս դէզինֆէկցիային ենթարկվեն. ճանապարհորդները 7 օրվա գնուելթեան պէտք է ենթարկվեն. արգելվում է հում կաշու, թաց մրգեղէնի մուտքը, բացի լիմոնից և նուռից։

ԼՕՆԴՕՆ, 8 յուլիսի։ «Daily Chronic» լրագրին հաղորդում է կաբուլից, որ աւգանական էմիրը զէնքի կանչից մօտ 70,000 մարդիկ խաղարում ապստամբութիւնը ճնշելու համար, բայց չատ գեղեր չը հնազանդեցին էմիրի հրամանին, պատրաստակ բերելով իրանց ճնշված դրութիւնը և Ռուսաստանի հետ գոյութիւն ունեցող ինչ որ խնդրիգաները։ Իչխանութեան այդպիսի տատանման հետևանքը կը լինի ընդհանուր ապստամբութիւն։ Կուսակցութիւնները համաձայնեցնելու համար էմիրը դիտաւորութիւն ունի սրբազան պատերազմ յայտարարել։ Այդ առիթով Հնդկաստանի փոխարքայի արած առաջարկութեանը, վերջինս ստացաւ հետևեալ պատասխանը. «Հրաժարվում եմ ցուցմունքներ ընդունել հնդկական կառավարութ. թիւնից. հոգս քաշելով իմ պետութեան մէջ եղած ապստամբութիւնը ճնշելու մասին, ես մտնում եմ անկախ իչխող, կարող եմ ինքս միջոցներ ընտրել և ոչինչ միջամտութիւն չեմ թոյլ տալիս։» — Պարլամենտական ընտրութիւններին վերջնականապէս ընտրված են 261 պահպանողականներ, 50 ունիօնիստներ, 272 գլադստօնականներ, 9 պարնելլիստներ և 68 հակապարնելլականներ։ Պահպանողականները կրկին ձեռք բերին 17 տեղեր, ունիօնիստները 8, գլադստօնականները 76։

ՎԻԵՆՆԱ, 8 յուլիսի։ Մինիստր Ջալէսկու դիւանատունը խորհրդակցութիւններ էին լինում Գալիչինում և Բուկովինում խօլէրայի տարածման դէմ գործ դնելի միջոցների մասին։ Ենթադրում են, որ բացի կարանտինային սովորական միջոցներից սահմանի վրա աւստրիական չատ քաղաքներում կը կազմակերպվեն տեղական մանուածոդոմներ խօլէրայի դէմ կռւելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յուլիսի։ Առաջին ներքին փոխառութեան տոմսերի խաղարկութեան ժամանակ 500-ական րուբլի տարան հետևեալ տոմսերը։

№	№	№	№	№	№
1598	1	17717	18	793	37
2253	1	3579	19	2131	37
5607	1	4074	19	9823	37
7508	1	8885	19	14131	37
9323	1	10809	19	14404	37
14561	1	18290	19	14418	37
14735	1	2736	20	15265	37
18936	1	8156	20	2219	38
657	2	8933	20	6360	38
6156	2	12447	20	7557	38
17278	2	193	21	15549	38
222	3	2232	21	1346	39
2249	3	9399	21	4968	39
12570	3	13986	21	5785	39
15654	3	597	22	6632	39
3681	4	749	22	7267	39
4166	4	7202	22	13066	39
10504	4	7453	22	13168	39
10984	4	11240	22	15874	39
19621	4	16987	22	16441	39
11453	5	18826	22	17386	39
13550	5	1746	23	19932	39
3118	6	3723	23	39	40
4005	6	6777	23	1214	40
4145	6	7434	23	1897	40
7829	6	11389	23	2559	40
12974	6	16700	23	15634	40
16813	6	18504	23	17373	40
13587	7	814	24	19508	40
17494	7	3172	24	1905	41
1304	8	351	25	9356	41
1618	8	9475	25	9447	41
1769	8	11775	26	12086	41
4831	8	12759	26	2017	42
8471	8	13818	26	2855	42
8641	8	4118	27	4850	42
8937	8	6613	27	5625	42
9054	8	14540	27	7094	42
9454	8	2438	28	8385	42
14608	8	3031	28	8814	42
3152	9	3442	28	11450	42
3431	9	10112	28	13524	42
5182	9	12361	28	15112	42
9486	9	12621	28	16418	42
9974	9	13908	28	366	43
10836	9	15876	28	1150	43
759	10	17648	29	1412	43
1674	10	1775	30	10307	43
4143	10	2350	30	10479	43
15119	10	4970	30	15403	43
743	11	5853	31	379	44
6357	11	8946	31	5220	44
8600	11	8964	31	6233	44
12640	11	13329	31	9514	44
12740	11	14848	31	12658	44
15835	11	1418	32	1804	45
85	12	5105	32	5518	45
2769	12	5314	32	9896	45
4167	12	6914	32	12577	45
10789	12	10202	32	12683	45
11020	12	12462	32	2895	46
12640	12	16993	32	4492	46
13653	12	1751	33	7631	46
16780	12	2621	33	8703	46
338	13	5801	33	16389	46
167	14	6893	33	16513	46
8952	14	8289	33	615	47
9147	14	10887	33	4668	47
1652	15	11201	33	5444	47
8971	15	15450	33	5854	47
14492	15	15672	33	9776	47
19387	15	19812	33	13767	47
4587	16	1731	34	455	48
12108	16	4666	34	1102	48
15383	16	10936	34	4961	48
15934	16	16380	34	7825	48
18856	16	18780	34	13279	48
2072	17	808	35	13679	48
7427	17	4537	35	18670	48
14667	17	6295	35	1430	49
15785	17	15215	35	2212	49
18979	17	18120	35	3205	49
71	18	19828	35	7045	49
5521	18	3867	36	12402	49
10398	18	10048	36	63	50
12074	18	13452	36	13489	50
21707	18	13862	36.		

Տիրած ընկած տոմսերը.

№№ сеpiй: 7168, 7702, 15041, 12589, 13305, 12969, 16585, 16013, 10633, 9813, 8481, 5635, 15716, 6378, 6309, 10183, 12893, 15293, 1071, 3324, 13806, 5544, 3026, 14883, 2572, 18315, 7990, 12300, 3501, 2800, 9682, 13373, 3591, 7350, 4698, 916, 14133, 9671, 16978, 11326, 10535, 10415, 1207, 18184, 5711, 8950, 19155, 14255, 910, 8865, 19630, 2130, 16618, 7423, 76, 6471, 14251, 14643, 3225, 6963, 19258, 18828, 10427, 4484, 12817, 15578, 8134, 10269, 2142, 6785, 9007, 6611, 12124, 15253, 11133, 9859, 18950, 19443, 6778, 10568, 10453, 6331, 6231, 5087, 2837, 14840, 12540, 13445, 7071, 2927, 13938, 9727, 15356, 1482, 47, 10352, 18193, 2780, 1759, 10962, 3018, 3652.

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
Յուլիսի 7-ին

Լօգոնի վրա 10 ֆունտ արժէ	. .	101 ր.	30 կ.
Բերլին վրա 100 մարկ	— . .	49 ր.	60 »
Պարիզի վրա 100 ֆրանկ	— . .	40 »	17 1/2 »
Ոսկի — — արժէ	. .	8 »	09 »
Մաքսային կուպօններ	— . .	161 »	25 »
Արծաթ — —	— . .	1 »	08 »
Բօրսային դիսկօնտօ	— . .	4 »	5 1/2 »

Պետ. բանկի 5% տոմս 1 չրջանի	. .	104 »	— »
— — — — 2-րդ —	. .	103 »	12 »
— — — — 3-րդ —	—	»	— »
— — — — 4-րդ —	—	»	— »
— — — — 5-րդ —	—	»	— »
— — — — 6-րդ —	102	»	75 »
6% ոսկեայ բէնատա	. . . . .	163 »	50 »
4% ոսկեայ փոխառութիւն.	. . .	— »	— »
Արևելեան 5 % փոխառ. 1-ին չրջ.		— »	— »
— — — 2-րդ —	102	»	62 »
— — — 3-րդ —	104	»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	235	»	— »
— — երկրորդ —	221	»	75 »
Պետական երկաթուղային բէնատա.	104	»	— »
5 1/2 բէնատա	. . . . .	— »	— »
4% ներքին փոխառութեան	. . .	95 »	12 »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	102	»	— »
Ազն. կալ. բանկի խաղարկութեան			
Գրաւ. թղթ. — —	.	192 »	50 »
5 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի.	105	»	12 »
4 1/2% գրաւական թղթեր կալուած.			
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	.	153 »	62 »
— — — թղթադ.	.	102 »	62 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օբլիգացիաները.	.	101 »	75 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		101 »	25 »
Օդեսայի — —	.	102 »	12 »
Թիֆլիսի — —	.	— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.		— »	— »
— — Ռոստովի —	.	— »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի արամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով տեղեկացնում է դիտութիւն ընդհանրութեան, որ երկու բնակարաններ են հարկաւոր խարիսխի և կովկիայի քաղաքային տարրական գպրոցների համար, մէկը 5-դ կամ 6-դ քաղաքամասում և միսը 9-դ կամ 10-դ քաղաքամասերում։ Իւրաքանչիւր բնակարանը պէտք է բաղկացած լինի հինգ լոյս սենեակներից որոնցից, երեքը պէտք է լինեն մեծ, պէտք է ունենան խոհանոց, զաւիթ և ընդարձակ բակ։ Ցանկալի էր, որ տունը առանձնացած լինի։ Տանտէրերի յայտարարութիւնները ընդունվում են քաղաքային վարչութեան մէջ մինչև յուլիսի 15-ը այս տարվայ։ 2—3

МОДИСТКА ЧУХАЗЯНЦЪ
ВЪ КОДЖОРАХЪ
Принимаетъ заказы, дача Кекелидзе, противъ заведенія св. Нины.

ԿԱՐԱՆՈՂ օրիորդ ԶՈՒԽԱՋԵԱՆՑ ընդունում է յունիսի 22-ից պատուէրներ
ԿՕՋՕՐՈՒՄ
իվան կեկելիձէի ամարանոցում, Ս. Նունէի դպրոցի դիմաց, Верхняя Шоссейная փողոցում։
№ 68. 4—4 (հ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(կովկիա, վօրօնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի
Դ. Գ. ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12 1/2—1 ժ. ներքին և երեխայոց ց.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Բ. ԱԼԵԿՍԷՅԵՎ—5—6 ժ. նեարդային ց. և էլեկտրաբուժութեան։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքին ց.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) համար առանձին։
28—52 (հ.) 90—№ 79 Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

ՓՈՂՈՑԻ ՄԵՆ ՊԱՀԵՍՏ (կայարանի մօտ, կօրգանօվի ձիաքաշի գծի վրա)։ Վաճառվում է մաս-մաս, սկսած 1/8 խորանարդ սաժէնից. չոր, խոհանոցի և հացագործների համար, ամենամատչելի գնով։ Նոյն տեղը գնում են մեծ քանակութեամբ փայտ անտառատէրերից։ № 56 9—10 (հ.)

Մ. Գ. ՁԻՑՏԼԻՆԻ
ԺԱՄԱՑՈՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԻ
ՕՊՏԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նո ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԻՆՆԵՆԵՆԵՐ և ԼՕՐՆԷՏՆԵՐ։ Թատրօնական և դաշտային ԲԻՆՕԿԼՆԵՐ, ՋԵՐՄԱՋԱՓԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վանների համար։ Վերաստուգված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ չերժաչափեր։ Լօրնէտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ չղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետալական թելեր։

Ակնոցներ և պէնսնէներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով։

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապագիների դնելը։

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են։ 45—50 (հ.)

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Іюля 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.